

2. ԱԼԻՇԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ՔՍԱՆԻՆԳԱՄԵԱԿԸ ԹԱԻՐԻՋԻ ՄԵՋ



Թաւրիզի Հայ Գաղութի մէջ, հինգ տարիներէ ի վեր գոյութիւն ունի «Գրական-Գեղարուեստական Սալօն» անունով հիմնարկութիւն մը ուր սեպտեմբերէն մինչև մայիսի վերջը ամէն շաբթու, կամ ամիս երկու երեք անգամ, տեղի կ'ունենան գրական-գեղարուեստական երկրորդներ, որոնց մեծ մասը նուիրուած եղբիւրն են հայ ազգային-գրական գործիչներու և ղեկավարու յիշատակին, որ և է յարմար արթիւ մը: Այս երկրորդներն ընդհանրապէս համամուտած կ'ըլլան դաստիարակութիւններով, երգերով և արտասանութիւններով:

«Գրական-Գեղարուեստական Սալօն»-ի հիմնադիրներն են՝ տիկին Շուշանիկ և Պրն. Ռուբէն Խանապատեան ամուսինները, որոնց եռանդն ու յարատեւութիւնը գնահատութեան և քաջալերութեան արժանի են:

«Գրական-Գեղարուեստական Սալօն»-ի վարչութեան նախաձեռնութեամբ Գեկտ. 17-ի ուրբաթ գիշերը, Սալօնի մէջ տեղի ունեցաւ Յուշերեկոյ, նուիրուած՝ հայ-ազգային մեծանուն և հայրենասէր բանաստեղծ, պատմագիր, տեղագիր և Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան աւագ անդամ Հայր Ղեշեղի Ալիշանի յիշատակին, աւոր մահուան քսանհինգամեակի առթիւ (1901-1926):

«Գրական-Գեղարուեստական Սալօն»-ի ճակատի պատի երկու կողմերէն կախուած էին Ռաբատի մեծագիր նկարը և Հայաստանի քարտէզը:

1. Այս քարտէզը, որ մօտ երկու մետր լայնք ու երկարք ունի, նկարած է վանեցի տարագիր վաղեմի ուսուցիչ Պ. Մարտիրոս Խերանեանը, որ մօտ 20 տարի առաջ ձեռնարկած է նման քարտէզներու աշխատանքներու: Լսեքի վրայ, շրաներով կը նկարէ քարտէզները, որոնց մէջ յայտնի են՝ Վան քաղաքի ընդհանուր, մանրամասն և ճշգրտ յատակագիծը (plan), Վասպուրական նահանգը (իսր ըրջկայ ասէմանակից նահանգներով) որու գլուխներ, գիւղեր, լեռներ, գետեր, սրբավայրերը և այլն նշանակուած են ճշգրտօրէն: Գեղարուեստի քարտէզներու զուգի գործոցը կրնանք համարիլ Հայաստանի քարտէզը, Ամերիկայի նախկին նախագահ Ռիչլանդի գծած առհասաններով: Այս քարտէզը, յերաւի, զեղարուեստական, պատմական և արժեքաւոր գործ մըն է, որ պատիւ

Արարատ լեռան ստորոտին կը հանգչէր մեծագիր նկարը Հայր Ալիշանի որ գրասեղանի առջևը կրած «Հայապատում»-ը կը սրբազրէ: Այնքան հարազատ, այնքան գեղեցիկ ու բնական է Հայր Ալիշանի այս նկարը, որ պատկանելի գիտնականի մը խոր տպաւորութիւն կը թողու ականատեսին վրայ:

Հայր Ալիշանի նկարին քովը դրուած էին իւր երկասիրութեանց իրեք զուգի գործոցները Սիւստան, Սլրարատ և Սիւսական մեծդի հատորները, որոնք ձեռքէ ձեռք կը խլուէին հանդիսականներէն, անոնց մէջ արթնցնելով հիացում, մի և երախտագիտութեան շնորհ զգացումներ վաստակաւոր հեղինակին — Հայր Ալիշանի — հանդէպ:

Երեկոյեան ժամը 8-էն սկսեալ երկսեռ հասարակութիւն, ուսանողներ և աշակերտները խոնուցան օրակ:

Որոշեալ ժամին հանդիսավայրը ժամանեց Արարատականի Հայոց Թեմական Առաջնորդը — հայրենասէր և ժողովրդասուէր Գեոր. Տէր Նիսիսէ Արքեպիսկոպոս Միշիդ-Թաւադեանը, որուն ներկայութիւնը առանձին հաճոյք պատճառեց հասարակութեան և շուք տուաւ հանդիսին:

Ժամը 8¹/₂-էն Խերանեանցարդ ազգային-գրական և կուսակցական գործիչ Պ. Ռուբէն Խանապատը հանդէպը բացուած յայտարարելով կ'առաջարկէ որ հասարակութիւնը յորդնկայս յարգէ յիշատակը ազգային-հայրենասէր բանաստեղծ, գիտնական, տեղագիր և պատմաբան Հայր Ղեշեղի Ալիշանի, մինչ ներսէն կը լսուի «Քամի փորոտան»-ի անուշ եղանակը, որմէ յետոյ խօսեւել կը հրաւիրուի Պ. Հայր Աճեմեանը:

«Գեոր. Սրբազան Հայր և յարգելի հասարակութիւն: Ասկէ 26 տարի առաջ, 1901 թուի նոյեմբերի 22-ի առաւօտեան ժամի 4-ին, Վե-

կը բերէ հեղինակին: Եթէ ո՛ր և է ազգային հիմնարկութիւն կամ բարեգործ անհատ մը յանձն առնէ գունատիւ հրատարակութեամբ լոյս ընծայել Հայաստանի այս քարտէզը, մեծապէս նպաստած պիտի ըլլայ մեր պատմութեան և աշխարհագրութեան ուսումնասիրութեան: 1928-ին կալիֆորնիայի ցուցահանդէսին, Պ. Մարտիրոս Խերանեան ուղարկեց իսր նկարած երկրագունտի քարտէզը, անգլիներէն գտնելով, 5 մետր երկայնք և 2 մետր լայնք ծաւալով: Ցուցահանդէսի Յանձնախումբը յատուկ մեքենայներով և գնահատութեան նախկին ընտրուածներէն էր Պ. Խերանեանի յաղողութիւնը և քաղաքները նշանակող յոյժ գնահատելի, մանրակրկիտ և յաշու աշխատութիւնը:

նեոտիկի Ս. Ղազարի Միխայիլի պատկանելի Միաբանութեան Մայրավանդի մէջ, հոգին ի Տէր աւանդեց Հայ նորագոյն գրականութեան ռազմիկներէն մէկը — մեծանուն բանաստեղծ, վաստակաւոր գիտնական, տեղագիր և պատմաբան, «Պապուլն Աւարայրի» Հայր Ղևոնդ Ախլանը, որուն հոգին սլացաւ յիշկինս այն պահաւ, ծրը «Լուսնայան գերեզմանաց հայոց» իւր լոյսի արցունքները, վերջին անգամ ըլլալով, կաթեցուց անոր ալեհեր ճակատին և հայրենախօս շրթունքներուն վրայ:

Արեւմտաքի մէջ կը մարէր կենաց արեւը Հայր Ախլանի, մինչ յարեւելս էլ միաժամին կամարեն, բուն տակ, «Դուազող վշտից հայրենեաց» Հայոց Հայրերէն խորոց սրտի կ'երգէր Հայր Ախլանի արեւագլխի երգը:

«Առաւօտուն գոնակն է բոց
Եւ, չ'լ արեւը Հայաստանեայց»:

Այս նախաբանէն յետոյ, Պ. Աճեմեան հաւկիրճ, հետաքրքիր և գեղեցիկ կերպով կը ներկայացնէ Հայր Ախլանի կենսագրութիւնը ծընունդ, մանկութիւն, աշակերտութիւն, ուսուցչական բեղմնաւոր գործունէութիւնը, յոգեւանք, զբաղան տպուած և անտիպ երկասիրութիւնքը, արտօնայ կենսքը, կամեաւորութիւն անդամակցութիւնը, բնոյթագծերը, հայրենաբաղձութիւնը և այլն և այլն — այս բոլորի մասին կու տայ հարկ եղած տեղեկութիւնները և կը վերջացնէ հետեւալ խօսքերով.

«Հայր Ախլանի մահուան վրայէն անցեր է քառասուն դար, բայց անոր հայրենաշունչ երգերն ու տեղագրական երկերը, իբրեւ մէկ մէկ կոթողական յուշարձաններ, անմահ և անմոռաց պիտի պահեն անոր պաշտելի անունը:

«Այժմ Վենետիկի Ս. Ղազար կղզեակի Միխայիլի պատկանելի և վաստակաւոր հանգուցեալներու — Զամշեանի, Ինճիճեանի, Բազրատունիի, Հիւրմիւզի և այլոց կողքին, կը հանգչի մարմնով սիրելի Հայր Ախլանին, որուն սիրտը կէս դար շարունակ ծփաց Հայ Աշխարհի սիրով, հայրենասէր Սիրտը՝ ուրիշ գոտի թոան՝ Աւարայրի Պապուլը, Բամ փորոտան, Լուսնայան և Կուսանք Հայոց, Նիսպան ու Սիսական, Արարատն ու Սիսական, Հայապատումն ու Հայ Բուսական և դեռ քանի՞ քանի՞ տասնեակ քերթողական երգերու երկեր, որոնք Հայոց Աշխարհի բնութիւնն ու փառքը կը բանահիւսեն:

«Հայաստանի սիրով ապրած, տրոփած, սընած Մեծ Սիրտը Հայր Ախլանի թաղուեցաւ

վենետիկի ափերուն, ուր ծովուն ջուրերը ծաղրանձ օրօր պիտի երգեն Հայոց հաւապետին, որուն հոգին սակայն կը սուրայ Վանայ և Սևանայ ծովակներուն վրայ, Արարատի և Արագածի լանջերն ի վեր, Արագածի և Հրազդանի ափերուն մօտ և այլն վայրերը ուր Հայ Գրիչը, և սուրն ու խաչը Հայոց Աշխարհը կերտեցին: Այդ վայրերուն վրայ լուսնակն անուշ կը ցօղէ իւր լոյսը, որմէ սակայն քանի մը շողիկներ կ'երթան հեռուն հեռուն, մինչև Վենետիկի Ս. Ղազար կղզեակը և կը ցունեն Ախլանի գերեզմանին վրայ, որուն խորքերէն կը լսուի հաւապետին մեղաւոր ձայնը:

«Այ ի՞նչ Լուսնակ գեղեցիկ
Առտաճաճում գութ լապտեր»

«Ենթադրեմք հոս կաթէ լոյսիդ արտասուք, հաւապետիս է այս գեղեցիկան»:

«Երբ հաւապետիդ տէր կակուշ հոգի,
Որ չ'գեղ պէնդ ռերեց Հայոց Աշխարհիկ...»:

«Իսկ այս կտակէն յետոյ ալ դեռ կը հնչէ անոր հայրենախօս փառքը:

«Ո՛ր Բող մեռնի ձեր հաւապետ մահու տապան
Այլ Բող ելէ՛ք ի տապանէ հար Հայաստան...»:

Պ. Աճեմեանի խօսքէն յետոյ, օր. Գլխունի Տէր Գաղտնեանը քնքուշ և հաճելի առողջանութեամբ կ'արտասանէ Հայր Ախլանի «Լուսնական Գերեզմանաց Հայոց» գեղահիւս քերթուածը և ապա Սալոնի վարդաթեան կողմէ իբր յիշատակի նուէր հանդիսականներուն կը տրուի մէկ մէկ թերթիկ Հայր Ախլանի նկարով և յիշեալ քերթուածով:

Ապա խօսելու կը հրաւիրուի Ատրպատականի Հայոց թեմական դպրոցի Հայ Գրականութեան ուսուցիչ Պ. Բակոյր Տէր Բակոյրեանը, որը կը ծանրանայ Հայր Ախլանի գրական ստեղծագործութեան վրայ: Պ. Տէր Գաղտնեանի այնքան շահեկան բանաստեղծներէն մէջ բերենք քանի մը հատուածները:

«Հայր Ախլանը Հայ ազգային-գրական դէմքերի մէջ խոշոր մեծութիւն է, իբրեւ բազմակողմանի տաղանդի տէր: Դա Հայ գրականութեան մէջ ի յայտ է գալիս իբրեւ հնախօս, պատմաբան, տեղագիր և մանաւանդ իբրեւ բանաստեղծ՝ իր ամբողջ էութեամբ: Իւր գրուածքները (Արարատ, Սիսական, Սիսական կայն) գիտական լին, նրանց մէջ բարեխում և երևում է Հայր Ախլանի հայրենասէր սիրտը, և ոչ թէ գիտաւ»:

կան միտքը: Նա շերմ կրօնաւոր է, պարզ ու հա-
մետ վանական, որու հոգու խորքում սակայն
միշտ վառ է մնում ազգի և հայրենիքի անտահ-
ման սիրոյ զաղափարը: Նրա երկերը թէպէտ
քննադատական տեսակէտից պակասին, բայց
այս թերին լրացնում են նրա ընդարձակ ծա-
նօթութիւնը նիւթերի հետ, բարեխիղճ ու
սուսնասիրութիւնը, արտայայտութեան արտա-
սովոր գորութիւնը և մանաւանդ շերմ ու հմայող
շունչը, որ սքանչելի են դարձնում իւր երկերը,
որոնք դժբախտաբար շատ քիչ ժողովրդակա-
նացած են, որովհետեւ գրուած են խրթին գրա-
բարով:

«Սակայն Հայր Աիշանը շատ աւելի յայտնի
է և սիրուած՝ իբրեւ քանադասող, որից ազդուել
են Մկրտիչ Պէշիկթաշլեան, Թովմաս Թէրզեան,
Պետրոս Գուրեան, և նոյն իսկ Գամառ-Քաթի-
պան և ուրիշներ: Նրա համար Հայաստանը
պաշտամունքի առարկայ է, սրբութիւն սրբոց:
Երկերի մէջ Հայու աստղ կը փնտռէ, իսկ եր-
կրի մէջ Հայուն աւերակ կ'որոնէ երգելու և
համբուրելու համար:

«Հայրենասիրութեամբ համակուժ մեզ, բուն
և անկեղծ սիրով: Իւր «Յուշիկք» խանդակաթ
զգացումներով օծուն, բարախուն մի երկ է, հայ-
րենիքի և կրօնի գաղափարներով զարդարուած:
Նոյն նիւթը կը բովանդակէ նաև «Նուազք»:
Իւր գրաբար քերթուածները մութ են, իսկ աշ-
խարհաբարները բարձր՝ զգացումով և լեզուով:
Հայր Աիշան է ու կը մնայ իբրեւ մի լուսատու
աստղ՝ Հայ գրականութեան երկերի վրայ:

Պ. Տէր Յակոբեանը զգածուած խօսքերով կը
վերջացնէ իւր քանախօսութիւնը և ապա Տիկ.
Գոհարիկ Յակոբեանը մեղանուշ և զգայուն ձայ-
նով մը կ'երգէ Հայր Աիշանի «Ով դու բարե-
կամ» (Պաշտույն Աւարայրիէն) ինչ որ քաղցր
ուպաւորութիւն կը թողու ներկաներով և վրայ:

Օր. Աստղիկ Մարտիրոսեանը կ'արտասանէ
«Աիշանի նկարին առջև» վեց տուն տաղաչափ-
ուած ոտանաւորը, յաջող առողջանութեամբ մը:

Օր. Ամազոն Տէր Յակոբեանը զգայուն ձայնով
մը կ'արտասանէ «Ամանագիր Աիշանի Շիր-
մին»՝ տաղաչափուած գեղեցկահիւս ոտանա-
ւորը:

Ապա Պ. Ռուբէն Խանազատեանը պարզ ու հա-
ճելի ռոնով մը, կը պատմէ իւր յուշերը Հայր
Աիշանի մասին, որուն հետ անձամբ ծանօթ
եղոր է, երբ 1892 թուին այցելած է Վենետիկի
Ս. Ղազարու Վանքը, Մխիթարեանց այդ հո-
յակապ կեդրոնը, ուր տեսած է Աիշանը և վայն-
լեր անոր հիւրասիրութիւնը:

«Միջնահասակ, 72ամեայ ալեհեր մի ծերունի
էր Հայր Աիշանը՝ կը շարունակէ Պ. Խանազա-
տը՝ համակրելի և ժպտուն դէմքով նա առաջ-
նորդեց ինձ վանքի բոլոր հետաքրքիր վայ-
րերը՝ տպարան, մատենադարան, թանգարան և
միւս շէնքերը և ամենքի մասին տալիս էր տե-
ղեկութիւններ և սիրով պատասխանում էր իմ
հարցումներին: Այս պոռոյաները երբ վերջաց-
րինք ես ժպտալով ասացի նրան.

« — Հայր Աիշան, յատկապէս խնդրում եմ,
որ ինձ ցոյց տաք նաև ձեր մենարան-աշխա-
տանքի սենեակը:

« — Ո՛հ, այդ կարելի չէ այժմ, զի սենեակս
շատ խառն է, գիրքեր հոս ու հոն թափփփուած:
Անյարմար վիճակ մը կը ներկայացնէ աշխա-
տանոցս: Ներեցէ՛ք, որ ձեր այդ բաղձանքի
պիտի չլինամ զոհացում տալ:

« Ես այլևս չըպնդեցի, երբ տեսայ որ Հայր
Աիշան այդպէս անկեղծօրէն պատճառաբանեց
ու մերժեց »:

Քանի մը բնորոշ խօսքեր ըսելէ յետոյ Պ.
Խանազատը վերջացուց իւր յուշերը: Իսկ Սըր-
բազան Առաջնորդն ալ, յանուն հասարակու-
թեան շնորհակալութիւն յայտնեց Խանազատեան
ամուսիններուն, աւելցնելով որ այս հինգ տա-
րիներու ընթացքին անոնք զովելի եռանդով կը
շարունակեն նման երեկոյթներով և դասախո-
սութիւններով վառ պահել ազգային գործիչներու
յիշատակը և ազգային ոգիի արծարծման կը
նպաստեն:

Յուշ-երեկոյն վերջացաւ գիշերուայ ժամը
12-ին և հասարակութիւնը հեռացաւ շատ զոհ և
ուրախ տպաւորութեամբ:

Թաւրիգի Հայոց կուլտուրական Միութիւնն
ալ մօտիկ օրերս Յուշ-երեկոյ մը պիտի նուիրէ
Հայր Աիշանին:

Թաւրիգ

ՄԱՍԻՍ

1. Հեղինակ՝ Հ. Վ. Բովհաննիսեան, ներշնչուած
նկարիչ Ն. Պորտիենոնի պատկերէն որ կը պահուի Միխ-
թարեան Թանգարանին մէջ Վենետիկ, Տեմ «Բազմա-
վեպ» 1926, Թիւ 11.

2. Հեղինակ՝ Հ. Եղիա Փէշիկեան. տեմ «Բազմա-
վեպ» 1926, Թիւ 11.

